*8* Սակայն առեալ Խոսրովու[1] զբազմութիւն զաւրաց[2] իւրոց, եւ[3] որ[4] ուստեք ուստեք[5] եկեալ[6] հասեալ էին[7] թիկունս աւգնականութեան նիզակակիցք[8] գործոյն պատերազմի[9]: *9* Իսկ իբրեւ ետես թագաւորն Պարսից զայն ամբոխ[10] բազմութեան[11] գնդի[12], զի մեծաւ ուժով դիմեալ[13] եկեալ[14] հասեալ էին[15] ի վերայ նորա՝ ել եւ նա ընդ առաջ[16] նոցա ի պատրաստութիւն[17] պատերազմի[18]: *10* Բայց սակայն ոչ կարաց ունել[19] զդէմ[20] նորա[21], փախստեայ[22] լինէր[23] առաջի նոցա. զհետ մտեալ կոտորէին զամենայն զաւրսն[24] Պարսից, եւ դաշտացն եւ ճանապարհացն[25] ցիր[26] դիաթաւալ[27] կացուցանէին եւ չարախտավատ[28] վատնէին[29] եւ անհնարին հարուածս ի վերայ հասուցանէին[30]: *11* Եւ թագաւորն Հայոց դառնայր ի մեծ[31] կոտորածէն [32]մեծաւ

1 Գ *խոստրովու*
2 abd *զաւրացն* / ԱՁ *զօրացն*
3 b չիք *եւ*
4 a *ուր*, փխ. *որ*
5 ԱՁ *ուստէք ուստէք*
6 b *որ ուստեք եկեալ*
7 d *հասանէին*
8 ab *նիզակակից*
9 abd *գործոց պատերազմացն* [b *պատերազմին*] / Դ *պատերազմին*
10 Ձ *ամփոփ*
11 ad *բազմութեան* / մնացածները՝ *կազմութեան*
12 Դ *գնդին*
13 ԳԴ չիք *դիմեալ*
14 abd *դիմեալ եկեալ* / ԱԲԵ-Ըtko *եկեալ դիմեալ*
15 d *հասանէին*
16 adԴ-Ըtko *ընդ յառաջ*
17 ԱՁ *ի պատրաստութիւնն*
18 a *պատերազմին*
19 Ձ *առնել*, փխ. *ունել*
20 Ը չիք *զդէմ*
21 a *նոցա*, փխ. *նորա*
22 abd *փախըստական* / Ը *փախստեան*
23 Գ *լինէին*
24 abd *զաւրսն* [b *զզաւրսն*] *ամենայն* / ԳԵԷԸk *զօրս*
25 Է *ի ճանապարհացն*
26 abd *ցիրս*
27 d *դիթաւալս* / Է *եւ դիաթաւալ* / Գ *դիաթաւալ ցիր*
28 abv *չարախտավատ* / d *ի չարախտավատ* / Ա-Ըtko *չարախտավար*
29 b *մատնէին*, փխ. *վատնէին*
30 abdԱԲԳՁԷԸk *ի վերայ (ի վերա) նոցա հասուցանէին*
31 a չիք *մեծ* / Դ *ի մէջ*, փխ. *ի մեծ*
32 Ա-ԵԷԸko *մեծաւ աւարաւ եւ բազում յաղթութեամբ եւ*